Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի հարցազրույցը «Ազատամտություն» թերթին

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1992թ. հետո, երբ Հայաստանը հռչակվեց անկախ պետություն, գիտության ասպարեզը, կարելի է ասել, լուրջ բարեփոխումների առումով առաջխաղացում չի ունեցել, հատկապես, եթե համեմատական կարգով վերհիշենք խորհրդային տարիները: Բնական է, որ մեր գիտության առջև դրված խնդիրները խորհրդային հասարակարգի փլուզմամբ արմատական փոփոխությունների ենթարկվեցին, քանզի հզոր գիտատեխնիկական տարածք ունեցող գերտերության մասնատումն առանձին բջիջների էլ ավելի արմատական ձևով անդրադարձավ այդ բջիջների արդեն անկախ գոյության վրա: Հայաստանը, ում վրա այն տարիներին դրված էին լուրջ պարտականություններ՝ գիտության զարգացման ասպարեզում, և Հայաստանը, որը լուրջ դերակատարում ուներ գերտերության կյանքում, մնաց անմասն և կանգ առավ նրա վրա, ինչ այդ պահին ուներ:

Ինչպիսի՞ն է այսօր իրավիճակը գիտության բնագավառում Հայաստանում և առհասարակ, արդյո՞ք Հայաստանն այսօր ունի գիտություն և եթե ունի, ապա ինչու է այն գտնվում այդպիսի քողարկված վիճակում, որ նկատելի չէ ոչ մեկին. այս հարցերի շուրջ զրուցեցինք ՀՀ կրթության և գիտության նախարարությանը կից գործող Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի հետ:

- Պարոն Հարությունյան, վերհիշելով անցյալը և նշելով այն բոլոր ինստիտուտ-հաստատությունները, որոնք կան նաև այսօր, չե՞ք կարծում, որ միևնույն ժամանակ դրանք այսօր գրեթե չեն գործում:

- Իհարկե, այդպես էլ պետք է լիներ, որովհետև Սովետական Միության տարիներին, մոտավոր հաշվարկներով, Հայաստանի գիտության բյուջեն հասնում էր մինչ 600 մլն ԱՄՆ դոլարի, իսկ, օրինակ, այս տարվա բյուջեով նախատեսված է ընդամենը 22 մլն դոլար: Մեր ղեկավարները կարծես թե վերջապես հասկացան, որ այս ոլորտում հարկավոր է որոշակի բարեփոխումներ իրականացնել, իսկ առանձին ենթակառուցվածքները ոչ թե քայքայվում են, այլ արդեն քայքայվել են: Ի դեպ, մի հետաքրքիր տվյալ նշեմ. 1978թ. տվյալներով Հայաստանի գիտության բնագավառում աշխատում էր 24-25 հազար մարդ՝ չհաշված բուհերը, իսկ այսօր մեր նախարարությունում գրանցված գիտնականների թիվը հազիվ հասնում է 7000-ի: Այսինքն՝ ունեցել ենք 15 հազար գիտնականի հոսք, այն էլ՝ երիտասարդ գիտնականների:

- Իսկ ի՞նչ քայլեր է ձեռնարկում պետությունը, որպեսզի շտկի ստեղծված իրավիճակը:

- Պետությունը հասկացավ, որ լուրջ ինստիտուցիոնալ բարեփոխումներ են անհրաժեշտ, պետք է մշակել գիտության զարգացման նոր ռազմավարություն առաջիկա 10-15 տարիների համար և անպայման վերանայել այն կապը, որ գոյություն ուներ գիտության և կրթության միջև, քանի որ մասնագետ ենք պատրաստում և չգիտենք ինչի համար: Պետք է վերականգնել նաև գիտություն-արտադրություն կապը, որովհետև այսօր գիտությունը գրեթե ամբողջությամբ նստած է դոտացիայի վրա, սնվում է պետական բյուջեից, ինչն անթույլատրելի է: Սովորաբար միջին եվրոպական չափանիշներով եկամուտների 50 տոկոսը գալիս է գիտական արդյունաբերությունից, իսկ մյուս 50 տոկոսը տալիս է պետությունը, և նման պարագայում ակնկալելի է գիտության զարգացումը: Բայց եթե պետությունն ամեն ինչ տալիս է և ոչ մի բան չի ստանում, ապա այդ գիտությունը կամաց-կամաց պետք է մեռնի: Այս նկատառումներով ստեղծվեց Գիտության պետական կոմիտեն, որն առայժմ գործում է նախարարության կազմի մեջ, բայց գիտական քաղաքականության մշակումն ու իրականացումը պետք է անի հենց այս կառույցը, և չի բացառվում, որ ապագայում կարգավիճակը փոխվի, որովհետև այն ամենը, ինչ մեզ է վերապահված, կոմիտեն անել չի կարող:

-Ինչո՞ւ:

- Անհնար է այն առումով, որ գիտությամբ զբաղվող և գիտության հետ առնչվող մի շարք կառույցների լիազոր ներկայացուցիչներն են տարբեր նախարարությունները, այլ կերպ ասած՝ գիտությունը բզկտված է և պետության առջև դրված խնդիրները լուծել կարողանալու համար այդ բզկտված մասը պետք է կենտրոնացնել մի նախարարության մեջ, որպեսզի հստակ գործես:
- Նախագահական ընտրություններից հետո, երբ կառավարության կազմը նոր պետք է ձևավորվեր, խոսակցություն կար այն մասին, որ կրթության և գիտության նախարարությունը բաժանվելու է և ստեղծվելու է գիտության նախարարություն, ինչը տեղի չունեցավ: Դրա փոխարեն ստեղծվեց սփյուռքի կոմիտե, որը հոկտեմբերից կգործի իբրև սփյուռքի նախարարություն, և փաստացի գիտության նախարարություն ստեղծելը դառնում է պրոբլեմային, քանի որ մեր պետությունը սպառել է Սահմանադրությամբ նախատեսված նախարարությունների թիվը:
- Վերջին հաշվով պետությունը ցանկացած ժամանակ կարող է գնալ այդ քայլին և եթե նպատակահարմար գտնի՝ ստեղծել գիտության նախարարություն: Ի վերջո, գիտությունը մեր տնտեսության զարգացման գերակայություններից մեկն է հայտարարվել, և հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կարծում եմ, այդ հիմնավորումը բավարար է, որպեսզի կառավարությունը որոշում կայացնի:
- Իսկ ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ պետությունը, ով իբր այդքան կարևորում է գիտության զարգացումը, այդուհանդերձ, չբաժանեց գիտության նախարարությունը:
- Ինձ համար դժվար է այդ հարցին պատասխանելը, որովհետև կային և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ, ինչի մասին ես չէի ցանկանա խոսել:
- Եթե Դուք չեք ցանկանում դրա մասին խոսել, ապա կարելի է եզրակացնել, որ մեր պետությանը, վերջին հաշվով, այսօր գիտությունն այդքան էլ պետք չէ:
- Չեմ կարող կիսել ձեր կարծիքը, որովհետև եթե պետք չլիներ, մեր իշխանությունները գիտությունը չէին հայտարարի որպես տնտեսության զարգացման ուղղություն և այլն:
- Դուք նշում եք 10-15 տարի, որի ընթացքում պետք է մշակվի և կյանքի կոչվի գիտության ոլորտի բարեփոխմանն ուղղված ռազմավարությունը, սակայն այսօր արդեն մենք ունենք մի իրավիճակ, երբ, օրինակ, Հայաստանի պատմագրությունը ոմանց կողմից խեղաթյուրվում է՝ դրանով իսկ հարվածի տակ դնելով մեր պետության հեղինակությունը միջազգային հանրության շրջանում:
- Ես իսկապես հույս ունեմ, որ մեր իշխանությունները շատ լավ հասկանում են դա, և հույս ունեմ, որ մոտակա ժամանակներս ինչ-որ բաներ անպայման կփոխվեն: Ինչ վերաբերում է պատմական խեղաթյուրումներին, իրոք, շատ լուրջ հարց է և դրանով պետք է շատ լուրջ զբաղվել, մանավանդ, որ այսօր հայագիտությունը մեր պետության մեջ համարվում է գերակա ուղղություններից մեկը և որին բյուջեով բավական մասնաբաժին ենք տալիս: Ի դեպ, նշեմ, որ պետական ծրագիր կա ,Հայոց պատմությունե քառահատորյակի հրատարակման հետ կապված, և սեպտեմբերին նախատեսում ենք սեմինար-խորհրդակցություն, որպեսզի պարզենք, թե ինչ է արված այդ ուղղությամբ: Դա մեզ համար շատ կարևոր է, և առաջիկայում ես պատրաստվում եմ այցելել պատմության ինստիտուտ:
- Ի դեպ, իբրև նախորդ հարցի շարունակություն, պատմության ինստիտուտի աշխատանքներն են, որ ոչ միանշանակ գնահատականի են արժանանում:
- Նշածս սեմինարին ներկա են գտնվելու պատմության ինստիտուտի ղեկավարությունն ու աշխատակիցները, և ակնկալում եմ, որ սպասվում են լուրջ քննարկումներ, թե ինչն էր պատճառը, որ քառահատորյակի շուրջ խնդիրներ են առաջացել՝ գաղափարական և փաստական հակասությունների առումով և այլն:
- Դուք հակասություն եք համարում այն, որ քառահատորյակի հեղինակների կողմից հայերին տրվում է ձևավորման 30- հազարամյա պատմությո՞ւն:
- Անձամբ ես, լինելով ֆիզիկոս, սիրում եմ, որ ամեն ասված բան ճշգրիտ ապացուցված լինի և օրինական չեմ համարում բարի ցանկություններից դրդված փաստերի խեղաթյուրումը: Խոսել պետք է ապացույցներով, հատկապես պատմության բնագավառում: Այս ոլորտում էմոցիաներով չպետք է առաջնորդվել: Լինելով բավական հին ժողովուրդ, նման խնդիր չունենք և անվիարժեքության բարդույթով չպետք է տառապենք: Փորձագետները և մասնագետները պետք է

ուսումնասիրեն բոլոր փաստերը, և եթե ասվում է, որ մենք ունենք 30-հազարամյա պատմություն, խնդրեմ, ապացույցներ բեր: Ի դեպ, ես հասկանում եմ, թե ինչ նկատի ունեք և նրան, ում հեղինակությամբ հրապարակվել են այդ տվյալները, համարում եմ լավ ֆիզիկոս:
- Բայց լավ ֆիզիկոսը կարող է վատ պատմաբան լինել...
- Անշուշտ, բայց ես նրան որպես ֆիզիկոս եմ ճանաչում, ոչ որպես պատմաբան. դա երևի հոբբի է իր համար: Եվ շատ հաճախ էմոցիոնալ պոռթկումներով է հանդես գալիս:
- Կարծում եմ՝ բոլորը կհիշեն, երբ Արցախի հարցը սկսեց բարձրաձայնվել, ականատես դարձանք նրան, որ հայկական ամեն բան ոչնչացվում էր ադրբեջանցիների կողմից, և նրանց ,պատմաբաններրը փորձում էին խեղաթյուրել պատմությունը: Եվ հիմա ստացվում է, որ նույն իրավիճակն ունենք մենք՝ ունենալով, ընդ որում, իրապես հնագույն պատմություն:
- Այդ իսկ պատճառով ես նշեցի, որ մենք պետք է ամեն կերպ խուսափենք փոքր ազգերին բնորոշ անլիարժեքության բարդույթով տառապելուց, որովհետև մենք այն ազգերից ենք, որ ունենք իրոք լուրջ պատմություն և ուռճացնել դա, բերել ինչ-որ չհիմնավորված փաստեր և տվյալներ՝ ես անընդունելի եմ համարում: Միգուցե քաղաքական տեսանկյունից ես սուր բաներ ասացի, որովհետև տարբեր քաղաքական ուժեր այս հարցին տարբեր կերպ են նայում, բայց ես, լինելով գիտնական և բոլորովին վերջերս զբաղեցնելով այս պաշտոնը, համարում եմ, որ ցանկացած գիտություն պետք է լուրջ հիմնավորվի:
- Եվ վերջում մի այսպիսի հարց՝ Դուք ինքներդ համարո՞ւմ եք Հայաստանը հնագույն քաղաքակրթություն:
- Հայաստանը կարելի է համարել հնագույն քաղաքակրթություն և կարելի է հիշել, թե ինչ ենք ունեցել, բայց պետք է այսօրվա օրով ապրել: Այսօր մեր երկրում այնքան անբնական բաներ կարելի է տեսնել, որ զարմանում ես, թե ինչպես են այս մարդիկ քաղաքակիրթ համարվում. փողոցում թքելը, դիմացինին անհարկի վիրավորելը կամ տարրական կուլտուրայի բացակայությունը... Հարգելով մեր պատմությունը՝ պետք է հպարտանալ, բայց ոչ ուռճացնել այն:

«Ազատամտություն» օրաթերթ, 02.09.2008թ. **Պատրաստեց՝ ԼԻԱ ԽՈՋՈՅԱՆԸ**